# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Քասախի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **Քասախ համայնքի խմելու ջրագծի կառուցման** ***աշխատանքների*** **կատարման** նպատակով կազմակերպված ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/11 ծածկագրով գնման ընթացակարգի

ընթացակարգի ծածկագիրը

արդյունքում 2019 թվականի օգոստոսի 8-ին կնքված N ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/11 պայմանագրում

պայմանագրի կնքման տարեթիվը և ամսաթիվը | պայմանագրի համարը

2019թվականի սեպտեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվու-

փոփոխությունը կատարելու մասին երկկողմ հաստատված փաստաթղթի տարեթիվը և ամսաթիվը

թյունը և կատարված փոփոխությունը պարունակող երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**՝ N 1 **«Սանլորետ» ՍՊԸ**-ի կողմից 18.09.2019թ.-ին ներկայացված N43 գրության, ինչպես նաև նախագծող **«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից** 30.09.2019 թվականի N ՍՄ-19/45 գրության, համաձայն որի նախագծում կատարվել են որոշակի փոփոխություններ, որը հանգեցնում է աշխատանքների կատարման ժամանակի երկարացման

***Փոփոխության նկարագրություն***՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ՝

1.1 Պայմանագրի 1.3 կետում նշված «**40 աշխատանքային օր**» բառերը փոխարինել «**մինչև 2019 թվականի հոկտեմբերի 31-ը**» բառերով:

1.2. Պայմանագրի N 2, N 3 հավելվածները շարադել նոր խմբագրությամբ համաձայն N 2, N 3 հավելվածները

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1 Սույն համաձայնագիրն ու հավելվածներ 2-ը և 3-ը ուժի մեջ են մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
1.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
1.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
1.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 2, N 3 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

***Փոփոխության հիմնավորում***

2019թվականի օգոստոսի 8-ին ստորագրված **Քասախ համայնքի խմելու ջրագծի կառուցման** ***աշխատանքների*** **կատարման** *N* **ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-19/11** պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը և, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «**Գնումների գործընթացի կազմակերպման**» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Պատվիրատու՝ Քասախի համայնքապետարան

01.10.2019թ.